ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2

«Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար գրասենյակային կահույք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ՇՀԱՊՁԲ-15-13-16/03» ծածկագրով շրջանակային համաձայնագրի շրջանակում գնահատող հանձնաժողովի նիստի.

ք.Գավառ 03 մայիսի 2016թ.

Սույն թվականի մայիսի 3-ին ժամը 14.30-ին «Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար գրասենյակային կահույք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ՇՀԱՊՁԲ-15-13-16/03» ծածկագրով շրջանակային համաձայնագրի շրջանակում գնային առաջարկների բացման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահ Ա. Հ. Ապրոյանը, հաձնաժողովի անդամներ՝ Լ. Գ. Սիրունյանը, Տ. Հ. Զաքոյանը: Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց գրանցամատյանի գրառումների մասին, ըստ որի հայտեր պարունակող ծրար է ներկայացել «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ն, հասցե՝ ք. Երևան, Հրաչյա Քոչար 8/16:

Հայտեր պարունակող ծրարներ չեն ներկայացրել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/13 շրջանակային համաձայնագիր կնքած և հրավերն ստացած թվով 271 կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր:

Հանձնաժողովը գնահատեց.

1) «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի հայտ պարունակող ծրարը մասնակցի կողմից կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝
   - շրջանակային համաձայանագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմում:
   - հայտարարություն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին:
   - հայտարարություն՝ մասնագիտական փորձառության մասին,
   - հայտարարություն՝ ֆինանսական միջոցների մասին,
   - հայտարարություն՝ տեխնիկական միջոցներ մասին,
   - հայտարարություն՝ աշխատանքային ռեսուրսների մասին:
   - գնի առաջարկ՝ 1, 2, 3, 4, 6 չափաբաժինների համար:
   - հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Ծրարում առկա էր մեկ բնօրինակ, երկու պատճեն, յուրաքանչյուրը՝ ութ էջից:

Գնային առաջարկների համադրում ՀՀ դրամով, առանց ԱԱՀ-ի՝

Չափաբա-ժինը	Գնման առարկայի անվանումը	«ՍԵՆԴԱ» ՍՊԸ
1	Աթոռ - 1	380.000 /երեք հարյուր ութսուն հազար դրամ/
2	Աթոռ - 2	700.000 /յոթ հարյուր հազար դրամ/
3	Աթոռ - 3	320.000 /երեք հարյուր քսան հազար դրամ/
4	Աթոռ - 4	156.000 /մեկ հարյուր հիսունվեց հազար դրամ/
6	Ամբիոն	110.000 /մեկ հարյուր տասը հազար դրամ/

2) Մասնակցի հետ բանակցություններ չեն վարվել:

3) Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի և 30-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

- ✓ 1,2,3,4,6 չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ին:
- ✓ 5 չափաբաժնով գնման ընթացակարգը համարել չկայացած՝ գնային առաջարկ չներկայացնելու հիմքով:
- ✓ Անգործության ժամկետ չի սահմանվում:
- ✓ ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն հարցում կատարել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:
- ➢ Ընթացակարգի մասնակցին տեղեկացնել որոշման մասին և «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերի 1-ին մասի 4.3 կետի <<դ>> ենթակետով նախատեսված փաստաթղթերը՝ այն է, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը:

4) Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից համապատասխան փաստաթղթերը սահմանված ժամկետներում ներկայացնելուց հետո:

5) Սույն արձանագրությունը հրապարակել պաշտոնական տեղեկագրում:

հանձնաժողովի նախագահ՝ Ա. Հ. Ապրոյան

հանձնաժողովի անդամ՝ Լ. Գ. Սիրունյան

հանձնաժողովի անդամ՝ Տ. Հ. Զաքոյան

հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Բ. Ղարաբաղցյան